



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
ՆՎԻՐՎԱԾ ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ**

**ՀՀ, ԳՅՈՒՄՐԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-9, 2019Թ.**





Հարգելի՛ գործընկերներ,

Միրով հրավիրում ենք ձեզ՝ մասնակցելու Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի (ՇՊՀ) հիմնադրման 85-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովին, որը տեղի կունենա 2019թ.-ի նոյեմբերի 8-ից 9-ը ՇՊՀ-ում:

Գիտաժողովի հիմնական ուղղություններն են՝

- Մաթեմատիկական գիտություններ
- Բնագիտական գիտություններ
- Տեխնիկական գիտություններ
- Աշխարհագրական գիտություններ
- Տնտեսագիտություն
- Հումանիտար գիտություններ
- Հասարակական գիտություններ
- Դասավանդման մեթոդիկաներ

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը, ռուսերենը և անգլերենը:

Հասցե. ՀՀ, ք. Գյումրի, 3126, Պ. Սևակ 4
Կայք. shsu.am
Էլ. հասցե. shsu.science@gmail.com
Հեռ. +374 312 6 64 80, +374 98 25 18 26



Գիտաժողովի կազմի անձնաժողով.

Նախագահ՝

Երվանդ Սերոբյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,
ռեկտորի ԺՊ, ֆիզմաթ գիտ. թեկնածու, դոցենտ

Տեղակալներ՝

Արմենուհի Սարգսյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և
կառավարման կենտրոնի տնօրեն, ֆիզմաթ գիտ. թեկնածու,
դոցենտ

Սամվել Սարգսյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան, ՀՀ ԳԱԱ
թղթակից անդամ, ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր

***Պատասխանատու
քարտուղար՝***

Լիլիթ Սարգսյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,
Գիտական քաղաքականության և արտաքին
համագործակցության կառավարման կենտրոնի գլխավոր
մասնագետ, ֆիզմաթ գիտ. թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Բագրատ Պողոսյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, ֆիզմաթ
գիտ. թեկնածու, դոցենտ

Ռուզաննա Մարդոյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,
Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկ. գիտ.
դոկտոր, պրոֆեսոր

Թամարա Մելիքյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,
Մանկավարժության ֆակուլտետի դեկան, բան. գիտ.
թեկնածու, դոցենտ

Օֆելյա Հովհաննիսյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի
դեկան, բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Արթուր Մկրտչյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան, Ռազմական
ամբիոնի պետ, փոխգնդապետ

Հենրիկ Դրմեյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սպարտակ Սողոյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,
մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Ալեքսանյան

ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան,

Հասցե. ՀՀ, ք. Գյումրի, 3126, Պ. Սևակ 4

Կայք. shsu.am

Էլ. հասցե. shsu.science@gmail.com

Հեռ. +374 312 6 64 80, +374 98 25 18 26



Արտուշ Թամրազյան	կենսաբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան, երկրաբ. գիտ. դոկտոր, դոցենտ
Մերգո Հայրապետյան	ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան, բան. գիտ. դոկտոր, դոցենտ
Գագիկ Խաչիկյան	ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան, բան. գիտ. դոկտոր, դոցենտ
Անահիտ Հովհաննիսյան	ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արտաշես Մկոյան	ՀՀ, Գյումրի, Շիրակի պետական համալսարան, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գիտաժողովին առկա կամ հեռակա մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2019թ.-ի հոկտեմբերի 10-ը լրացնել մասնակցության հայտը էլեկտրոնային համակարգով, որը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://shsu.am/2019-%d5%a9/>, ինչպես նաև shsu.science@gmail.com կամ sci@shsu.am էլեկտրոնային հասցեներին ուղարկել զեկուցումներին համապատասխան հոդվածները՝ ըստ ներկայացվող չափորոշիչների: Ներկայացված հոդվածները ենթարկվելու են գրախոսման, և արդյունքում դրական կարծիքի արժանացածները տպագրվելու են ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրի հատուկ համարում:

Միրով սպասում ենք Ձեր ակտիվ մասնակցությանը:

Հարգանքով՝
Գիտաժողովի կազմհանձնաժողով



Վերջնաժամկետներ.

2019թ հոկտեմբերի 10	Մասնակցության հայտերի և զեկուցումներին համապատասխան հոդվածների ներկայացման վերջնաժամկետ
2019թ հոկտեմբերի 25	Գիտաժողովի ծրագրի նախնական տարբերակի ներկայացում մասնակիցներին
2019թ. նոյեմբերի 8-9	Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Շիրակի պետական համալսարանի հիմնադրման 85-ամյակին

Հասցե. ՀՀ, ք. Գյումրի, 3126, Պ. Սևակ 4
Կայք. shsu.am
Էլ. հասցե. shsu.science@gmail.com
Հեռ. +374 312 6 64 80, +374 98 25 18 26



ՀՈԴՎԱԾԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՇՊՀ-Ի ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ ՇՊՀ, 2018Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-9

1. Հոդվածները ներկայացնել Word միջավայրում՝ ձևակերպված հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներից որևէ մեկով:
2. Թուղթը՝ A4 ֆորմատ, գրքային:
3. Լուսանցքները՝ վերևից, աջից, ձախից՝ 4 սմ, ներքևից 5 սմ:
4. Տառաչափը՝ 12pt:
5. Տառատեսակը՝ հայերենի դեպքում՝ Sylfean, ռուսերենի, անգլերենի դեպքում՝ Times New Roman:
6. Միջտողային հեռավորությունը՝ 1pt:
7. Աշխատանքի բնագավառը, ՀՏԴ (համընդհանուր տասնորդական դասակարգման) կողը՝ բնագրի լեզվով, գլխատառերով, առաջին տողում, հավասարեցումը երկկողմանի, թավ:
8. Աշխատանքի վերնագիրը՝ բնագրի լեզվով, գլխատառերով, երկրորդ տողում, հավասարեցումը կենտրոնից, թավ:
9. Հեղինակի (հեղինակների) ազգանունը, անվան ու հայրանվան առաջին տառերը՝ բնագրի լեզվով, երրորդ տողում, հավասարեցումը կենտրոնից, թավ:
10. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել աշխատանքի հակիրճ բնութագիրը բնագրի լեզվով, հավասարեցումը երկկողմանի, ուղիղ:
11. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել աշխատանքի հանգուցային բառերը բնագրի լեզվով՝ մինչև 10 բառ, հավասարեցումը երկկողմանի, ուղիղ:
12. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել 8-11 կետերի տեղեկատվությունը ռուսերեն ու անգլերեն, եթե բնագրի լեզուն հայերենն է, հայերեն ու ռուսերեն, եթե բնագրի լեզուն անգլերենն է, հայերեն ու անգլերեն, եթե բնագրի լեզուն ռուսերենն է:
13. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել նախաբանը՝ հոդվածի թեմայի շրջանակում գրականության վերլուծություն, աշխատանքի նպատակի շարադրում և արդիականության հիմնավորում (1 էջը չզերազանցող) :
14. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել հոդվածի հիմնական բովանդակությունը:



15. Հղումները տեքստում ներկայացնել քառակուսի փակագծերի մեջ՝ նշելով տվյալ աշխատանքի համարը գրականության ցանկից:
16. Բանաձևային արտահայտությունները հարկավոր է իրականացնել *Math Type* կամ *MS Equation* բանաձևային խմբագրերի միջոցով: Համարակալվում են միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի (1), (2),..., հավասարեցումը՝ կենտրոնացված, համարակալումը՝ աջից: Բոլոր համարակալումները պետք է դասավորված լինեն միևնույն ուղղաձիգի վրա: Բանաձևերում կիրառվող բոլոր նշանակումները հարկավոր է պարզաբանել: Մեծությունների չափողականությունները պետք է համապատասխանեն СИ համակարգին:
17. Աղյուսակները պետք է վերնագրվեն և համարակալվեն:
18. Գրաֆիկական նյութը և նկարները՝ միայն սև-սպիտակ երանգավորմամբ, հստակ, վերնագրված և համարակալված, չպահանջի լրացուցիչ խմբագրում,: Այն հարկավոր է ներկայացնել jpeg կամ tiff ֆորմատներով (300dpi-ից ոչ պակաս):
19. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել եզրահանգում (0,5 էջը չզերազանցող)՝ ներառելով աշխատանքում ստացված հիմնական արդյունքները:
20. Գրականության ցանկի տարրերը պետք է ներկայացնել ըստ ներքոնշյալ օրինակների.

Գրքերի օրինակներ.

1. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
2. Будак Б. М., Фомин С. В. Кратные интегралы и ряды. М.: Изд.-во «Наука». 1967. 608 с.
3. Nowacki W. Theory of Asymmetric Elasticity. Oxford. Pergamon Press. 1986. 383 p.

Ամսագրերի/պարբերականների օրինակներ.

1. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հատկությամբ// Մաթեմատիկական բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: № 1: էջ 5-17:
2. Пальмов В. А. Основные уравнения теории несимметричной упругости // Прикладная математика и механика. 1964. Т. 28. Вып. 6. С. 1117-1120.
3. Iesen D. The plane micropolar strain of orthotropic elastic solids // Archives of Mechanics. 1973. Vol. 5. № 3. P. 547-561.

Հասցե. ՀՀ, ք. Գյումրի, 3126, Պ. Սևակ 4

Կայք. shsu.am

Էլ. հասցե. shsu.science@gmail.com

Հեռ. +374 312 6 64 80, +374 98 25 18 26



Ժողովածուի օրինակներ.

1. Խաչատրյան Ն. Գ., Հարությունյան Ս. Ն. Հայերի մշակութային արժեքային կողմնորոշումների միջմշակութային ուսումնասիրություն // Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան: «Էդիտ Պրինտ» հրատ.: 2011: Էջ 80-83:
2. Маргарян Л. М. Построение прикладной динамической модели микрополярных упругих ортотропных тонких стержней асимптотическим методом // Труды международной конференции “Актуальные проблемы механики сплошной среды”. 08-12 октября. 2012. Цахкадзор, Армения. Т. 2. Ереван: Изд.-во ЕГУ АС. 2012. С. 19-23.
3. Kolesnikov A. M., Popov A. V. Pure bending of a pressurized curved tube // Proceedings of the International Conference Shell Structures: Theory and applications. 16-18 October, 2013. Gdansk, Poland. Taylor&Francis Press. London. 2014. P. 113-116.

21. Հողվածի ծավալը չպետք է գերազանցի 10 էջը: Բոլոր էջերը պետք է համարակալվեն ներքևից՝ կենտրոնում:
22. Առանձին փաստաթղթով («տվյալներ հեղինակի մասին»), հողվածի լեզվով հարկավոր է ներկայացնել սպառիչ տեղեկություններ հեղինակի (հեղինակների) մասին՝ նշելով անուն, ազգանուն, հայրանուն (լիովին), աշխատավայր, գիտական աստիճան, կոչում, հեռախոս, էլեկտրոնային հասցե (e-mail):
23. Հողվածները հարկավոր է ուղարկել shsu.science@gmail.com կամ sci@shsu.am էլեկտրոնային հասցեներին:



ՀՏԴ ---

ԲՆԱԳԱՎԱՌԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԵՆ
Ազգանուն Անուն Հայրանուն

Հոդվածի հակիրճ բովանդակությունը հայերեն՝ 5-7 տող, տառաչափը՝ 12pt, հավասարեցումը՝ ըստ լայնքի (по ширине):

Բանալի բառեր՝ մինչև 10 հայերեն բառ, տառաչափը՝ 12pt, հավասարեցումը՝ ըստ լայնքի (по ширине):

ЗАГОЛОВОК РАБОТЫ НА РУССКОМ
Фамилия Имя Отчество

Հոդվածի հակիրճ բովանդակությունը ռուսերեն՝ 5-7 տող, տառաչափը՝ 12pt, հավասարեցումը՝ ըստ լայնքի (по ширине):

Ключевые слова: մինչև 10 ռուսերեն բառ, տառաչափը՝ 12pt, հավասարեցումը՝ ըստ լայնքի (по ширине):

TITLE OF THE WORK IN ENGLISH
Surname Name Middle name

Հոդվածի հակիրճ բովանդակությունը անգլերեն՝ 5-7 տող, տառաչափը՝ 12pt, հավասարեցումը՝ ըստ լայնքի (по ширине):

Key words: մինչև 10 անգլերեն բառ, տառաչափը՝ 12pt, հավասարեցումը՝ ըստ լայնքի (по ширине):

Նախաբան (введение)՝ հոդվածի թեմայի շրջանակում գրականության վերլուծություն, աշխատանքի նպատակի շարադրում և արդիականության հիմնավորում (1 էջը չգերազանցող):



Հոդվածի հիմնական բովանդակությունը (10 էջը չգերազանցող):

1. Բանաձևային արտահայտությունները հարկավոր է ներկայացնել Math Type կամ MS Equation բանաձևային խմբագրերի միջոցով: Համարակալվում են միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի՝ (1), (2),...: Հավասարեցումը՝ կենտրոնացված (по центру), համարակալումը՝ աջից: Բոլոր համարակալումները պետք է դասավորված լինեն միևնույն ուղղաձիգի վրա: Բանաձևերում կիրառվող բոլոր նշանակումները հարկավոր է պարզաբանել:

$$\frac{1}{r} \frac{\partial \sigma_{12}}{\partial \varphi} + \frac{1}{r} \sigma_{22} + \frac{\partial \sigma_{22}}{\partial r} - \frac{1}{r} \sigma_{11} = \rho \frac{\partial^2 V_2}{\partial t^2} \quad (1)$$


2. Մեծությունների չափողականությունները պետք է համապատասխանեն СИ համակարգին:

3. Աղյուսակները պետք է վերնագրվեն և համարակալվեն:

Таблица 1. Первые низкие частоты свободных колебаний стержня по МКЭ.

$\omega_1 \times 10^5$ (Гц)	$\omega_2 \times 10^5$ (Гц)	$\omega_3 \times 10^5$ (Гц)	$\omega_4 \times 10^5$ (Гц)
1 конечный элемент			
58.286	0.28855	4.73570	58.500
2 конечный элемент			
58.286	0.13384	4.73204	58.499
4 конечный элемент			
58.286	0.12912	4.73151	58.499
8 конечный элемент			
58.286	0.12899	4.73151	58.499

4. Գրաֆիկական նյութը պետք է լինի հստակ, սև-սպիտակ երանգավորմամբ և չպահանջի լրացուցիչ խմբագրում: Այն հարկավոր է ներկայացնել jpeg կամ tiff ֆորմատներով (300dpi-ից ոչ պակաս): Գրաֆիկները ևս պետք է վերնագրվեն և համարակալվեն:



Նկար 1.

5. Հողվածում պարտադիր են հղումներ գրականության ցանկում նշված բոլոր աշխատանքներին՝ [1], [2-4]...

Եզրահանգում (заключение)՝ աշխատանքում ստացված հիմնական արդյունքների ներկայացում (0,5 էջը չգերազանցող):

Գրականություն

1. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
2. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հասկացմամբ// Մաթեմատիկական բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: № 1: էջ 5-17:
3. Маргарян Л. М. Построение прикладной динамической модели микрополярных упругих ортотропных тонких стержней асимптотическим методом // Труды международной конференции “Актуальные проблемы механики сплошной среды”. 08-12 октября. 2012. Цахкадзор, Армения. Т. 2. Ереван: Изд.-во ЕГУ АС. 2012. С. 19-23.